Erasmus+ կրեդիտային շարժունության շրջանակներում

Տուշայի համալսարան գործուղման հաշվետվություն

Տուշայի համալսարանը տեղակայված է Վիտերբոյի տարածաշրջանում՝ շրջապատված պատմական կենտրոնով: Տուշայի համալսարանը հիմնադրվել է 1979 թ. և իր զարգացման ընթացքում բազմաթիվ ձեռքբերումներ արձանագրել: Այժմ այն մշակութային, կրթական մի կենտրոն է, որը տարաբնույթ դասընթացներ է կազմակերպում թե՛ տեղական, թե՛ օտարազգի ուսանողների համար՝ ազգային և միջազգային պահանջներին համապատասխան:

Համալսարանի կրթական գործունեությունը կառավարում են յոթ դեպարտամենտները, որոնք առաջարկում են բակալավրիական 15, մագիստրոսական 14 կրթական ծրագրեր և 2 ինտեգրված ծրագիր: Այս ծրագրերը համապատասխանեցվում են մասնագիտությունների և աշխատաշուկաների միջազգային պահանջարկին: Համալսարանն առաջարկում է նաև ասպիրանտական 6 ծրագիր (PhD):

ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ

Համալսարանում գործում են երկու տարբեր վարչական գրասենյակներ.

- Ուսանողական գրասենյակ
- Ուսումնական մաս

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Սա վարչական գրասենյակ է, որը տեղեկատվություն է տրամադրում բակալավրիական և մագիստրոսական ծրագրերին գրանցվելու վերաբերյալ: Բացի այդ, գրասենյակի անձնակազմն օգնում է լրացնել առցանց դիմումները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Այս գրասենյակը պատասխանատու է դասընթացների և տեղեկատվության տրամադրման հետ կապված հարցերի համար.

- Դասընթացի ծրագրերի կողմնորոշում և ուղղորդում,

- Առցանց ուսուցման ծրագրերի դասերի ժամանակացույցների և վայրերի մասին տեղեկատվության տրամադրում,
- Մագիստրոսական ծրագրերի դասընթացների դիմումների նախնական գրանցում,
- Մագիստրոսական ծրագրերի դասընթացների նախնական գրանցում,
- Քննությունների ժամանակացույցի կազմում,
- Ուսանողների համար խորհրդատվության ժամերի սահմանում,
- Վերապատրաստման հնարավորությունների տրամադրում:

ԱՌՑԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊՈՐՏԱԼ

portalestudenti.unitus.it

Ուսանողական պորտալը վեբ համակարգ է, որը ուսանողները կարող են օգտագործել՝ առանց անձամբ ներկայանալու ուսանողական գրասենյակներ. կարող են օգտվել զանազան առցանց ծառայություններից պարզ, ինտերակտիվ և ինքնուրույն ձևով: Ուսանողները պորտալ կարող են մուտք գործել համացանցին միացված անձնական համակարգչից գրանցման ժամանակ հատկացված հարկային կոդի կամ ծածկանվան միջոցով:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՎԵԲԿԱՅՔԸ

www.didattica.unitus.it

Սա հանրային պաշտոնական վեբկայք է՝ նախատեսված համալսարանի ուսումնական ծրագրերի համար: Այն ներառում է ծրագրի հետ կապված բոլոր մանրամասները՝ ընդհանուր տեղեկատվություն, ընդունելության պահանջներ և քննություններ, դասախոսական կազմ, առարկաներ և ուսուցման ձևաչափեր, կարիերայի հնարավորություններ, կանոնակարգեր, ուսումնական տարվա ժամանակացույց, ավարտական քննությունների ամսաթվեր և դասավանդման ուղեցույցներ: Պորտալի միջոցով հնարավոր է յուրաքանչյուր համակարգչից մուտք

գործել և տեսնել դասընթացները, քննությունների ժամանակացույցները և ընթերցել քննական ծրագրերը:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ՝ DISTU

Լեզուների դեպարտամենտի գլխավոր գրասենյակը պատասխանատու է համալսարանի բոլոր օտարերկրյա ուսանողներին և անձնակազմին աջակցություն ցուցաբերելու համար: Լեզուների դեպարտամենտի գործառույթներից մեկն է կառավարել և իրականացնել նախնական թեստավորում՝ որոշելու համար անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի սկզբնական մակարդակը, ինչպես նաև հյուրընկալել հետևյալ լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, պորտուգալերեն և չինարեն, միջազգային ընդունված քննություններ իրականացնող մարմիններին: Այն պատասխանատու է նաև այցելած օտարերկրյա ուսանողների լեզվի իմացության ձեռք բերման համար (L2 իտալերենի դասընթաց): Բաժինն ունի չորս մուլտիմեդիա լսարան: Unitus Moodle հարթակն օգտագործողները հավելյալ ուսումնական աջակցություն են ստանում:

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Մագիստրանտների համար համալսարանները կարող են խորացված և մասնագիտացված դասընթացներ առաջարկել: Դրանք բարեհաջող ավարտելու դեպքում նրանց շնորհվում է առաջին և երկրորդ մակարդակի մագիստրոսի կոչում: Ամեն տարի մագիստրոսական դասընթացները թարմացվում և ակտիվացվում են, անգամ եթե դիմորդների թիվը հասնում է նվազագույնին: Բակալավրի աստիճան ունեցող շրջանավարտները կարող են գրանցվել միայն մագիստրոսական դասընթացների առաջին մակարդակին, մինչդեռ մագիստրոսի աստիճան ունեցող

շրջանավարտները կարող են մասնակցել մագիստրոսական աստիճանի առաջին և երկրորդ մակարդակի դասընթացներին:

Մագիստրոսական դասընթացները ներառում են դասախոսություններ և վերահսկվող ուսուցման այլ ձևեր, ինչպես նաև ինտերակտիվ ուսուցում՝ սովորաբար ուսումնական տարվա կտրվածքով: Այն ներառում է պարտադիր պրակտիկա և/կամ նախագծի կամ գիտական թեզի ներկայացում՝ որպես ուսումնական ծրագրի հիմնական մաս: Վերոնշյալ գործողությունները համակցվում են անհատական ուսուցման հետ՝ ընդհանուր 1500 ժամ ծանրաբեռնվածությամբ: Ծրագրի ավարտին շնորհվում է առնվազն 60 կրեդիտ:

DAFNE

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Այս դեպարտամենտը եզակի է նրանով, որ Լացիոյի տարածաշրջանի միակ դեպարտամենտն է, որն իրավասու է դասավանդելու և հետազոտություններ կատարելու գյուղատնտեսական, անտառաբուծական, բնապահպանական գիտությունների և ագրո-կենսատեխնոլոգիայի ոլորտներում: Ուսուցումը սերտ կապված է հետազոտության հետ, և այս կապը ավելի է սերտանում, երբ եռամյա բակալավրիական ծրագիրը խորանում է մագիստրոսական ծրագրում, իսկ ասպիրանտական ծրագրի հետազոտական աշխատանքներ կատարելիս հասնում առավելագույն մակարդակի:

DEB

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Դեպարտամենտը կենսաբանության և բնապահպանության ոլորտներում պատրաստում է հմուտ տեխնիկներ և ոլորտի մասնագետներ:

Բնական գիտությունների շրջանավարտները կարող են արտադրողական և տեխնոլոգիական գործունեություն ծավալել զանազան պրակտիկ ոլորտներում, ի հավելումն դրան՝ բազմաթիվ վերլուծական ծառայություններ իրականացնել: DEB-ն ունի բազմաթիվ լաբորատորիներ, որտեղ ուսանողներն աշխատում են իրենց ավարտական թեզերի և ասպիրանտական ավարտական ատենախոսությունների ուղղությամբ: Դեպարտամենտը համալրված է արդի սարքավորումներով և վերահսկվում է դասախոսական կազմի, ինչպես նաև ազգային և միջազգային ճանաչում ունեցող հետազոտողների կողմից, ում աշխատանքները հրապարակվում են միջազգային առաջատար ամսագրերում:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

DEIM դեպարտամենտի ուսումնական ծրագրերը նախագծվել են պրոֆեսիոնալ ընկերությունների և ֆիրմաների համագործակցությամբ, որպեսզի խթանեն կրթությունը և վերապատրաստումը՝ նկատի ունենալով աշխատանքային հեռանկարները: Սա նպաստում է հետագայում ուսանողների՝ աշխատանքի տեղավորմանը և պրակտիկաների կազմակերպմանը, որոնք իրականացվում են ուսումնառության ընթացքում:

DEIM դեպարտամենտի կողմից առաջարկվող դասընթացներն իրականացվում են մեկ փուլով՝ 3-ամյա ուսուցում՝ բակալավրի աստիճանի շնորհմամբ, որին հաջորդում է մագիստրատուրան՝ 2 տարի ուսուցմամբ:

DIBAF

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

DIBAF դեպարտամենտը միջառարկայական և միջդիսցիպլինար հետազոտության և կրթության լաբորատորիա է, որի նպատակն է գիտական և տեխնոլոգիական նորարարություններ իրականացնել: Այն կապված է կենսաբանական համակարգի և անտառաբուծության ռեսուրսների շահագործման, պահպանման և կառավարման հետ, ներառում է նաև սննդի վերամշակման և անվտանգության, մարդկանց առողջության և քիմիայի, բնապահպանության և հողի հետ կապված հարցեր: Այն ճանաչված է նաև մշակութային ժառանգության և լանդշաֆտի մասին ունեցած իր գիտելիքներով, կառավարմամբ և վերականգնմամբ:

DIBAF բաժինը առաջարկում է բակալավրի աստիճանի երեք տարբեր դասընթացներ՝ բաղկացած երեքամյա ուսուցման ծրագրից, որին հետևում են մագիստրոսի աստիճանի շնորհմամբ երկու տարբեր մասնագիտացմամբ ծրագրեր՝ երկու տարի տևողությամբ: Նախատեսվում է նաև հնգամյա, մեկ փուլից բաղկացած մագիստրոսական ծրագիր:

DISTU

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դեպարտամենտի հետազոտությունը և ուսուցումը իրականացվում է հիմնականում եվրոպական ինքնության ինստիտուցիոնալ, պատմական, լեզվաբանական և մշակութային տեսակետների և դինամիկայի ուղղությամբ:

Դեպարտամենտի կողմից առաջարկվող ծրագրերը ներառում են ուսուցման հինգ տարբեր ձևաչափեր լեզուների, իրավունքի և քաղաքական հաղորդակցության, արվեստի, հնէաբանության և պատմության ոլորտներում (1 եռամյա բակալավրիական ծրագիր, 3 մագիստրոսական և մեկ փուլից բաղկացած 1 մագիստրոսական ծրագիր): Այդ ծրագրերն են՝

- Ժամանակակից լեզուներ և մշակույթ,
- Լեզուները և մշակույթը միջազգային հաղորդակցության համար
- Քաղաքական, միջազգային անվտանգություն և հանրային հաղորդակցություն,
- Արվեստի հնէաբանություն և պատմություն - օրենքի պաշտպանություն և ընդլայնում:

Տուշայի համալսարանի միջազգային հարաբերությունների բաժնի պետ Կառլո Կոնտարդոյի հետ հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին ներկայիս Erasmus+ KA107 շարժունության ծրագիրը, ինչպես նաև որոշեցին ամրապնդել և խորացնել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Տուշայի համալսարանի միջև առկա կապերը՝ սկիզբ դնելով կրկնակի դիպլոմով ծրագրեր ստեղծելու աշխատանքներին:

ADMINISTRATION OF FINANCE AND CONTROL

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Առաջին տարի

- Ձեռնարկությունների գնահատում և միջազգային հաշվապահություն
- Ֆինանսական տնտեսագիտություն
- Ֆինանսական վիճակագրություն

Կամընտրական առարկաներ՝

- Սնանկացման իրավունք/ Ֆինանսական իրավունք
- Sample Surveys/Ֆինանսների և տնտեսագիտության մաթ. մոդելներ
- Ներդրումային բանկային գործունեություն/ Ներքին աուդիտ

Երկրորդ տարի

- Սեկտորային վերահսկողություն/Directional Control
- Ֆինանսական միջոցների իրավունք
- Հանրային կառավարման պլանավորում և վերահսկողություն/ռիսկերի կառավարում
- Դրամավարկային միջազգային իրավունք/Հարկային տնտեսագիտություն
- Խմբերի տնտեսագիտություն և արտակարգ գործառնություններ/ Economics of Groups and Extraordinary Operations
- Ֆինանսներ 2

Կամընտրական առարկաներ՝

- Ձեռներերցների պատասխանատվություն և կազմակերպական մոդելներ
- Քաղաքացիական իրավունք/Առևտրային-վարչական իրավունք
- Ֆինանսական վիճակագրություն

Հարակից առարկաներ

Այլ ուսումնական պլանից 1 կամայական առարկա

պրակտիկա

անգլերեն